ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԱՐՈՆ Գ. ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Երիցյան.

Ի պատասխան Ձեր 07.12.2020թ. գրության՝ տեղեկացվում է, որ Երևան համայնքի 2020թ. ճշտված բյուջեով աշխատակազմի արտասահմանյան գործուղումների գծով ծախսերի նախատեսումը կազմում է 10,577.1 հազ. դրամ և հաշվի առնելով ընթացիկ բյուջետային տարում COVID-19-ի գործոնը՝ փաստացի կազմում է 486,4 հազ. դրամ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Երևան համայնքի 2021թ. բյուջեի նախագծով՝ վերը նշված ծախսային ուղղությամբ, նախատեսվում է 58,500.0 հազ. դրամ, որի արդյունքում ակնկալվում է աշխատանքային այցերի միջոցով համագործակցել տարբեր քաղաքների հետ, ինչպես նաև իրականացնել փորձի փոխանակում:

Տեղեկացվում է նաև, որ 2020թ. ընթացքում իրականացվել է 3 գործուղում, որին մասնակցել է 5 անձ:

2021թ. նախատեսված գործուղումներին հնարավոր կլինի անդրադառնալ ըստ եռամսյակների՝ հաջորդ տարվա սկզբից՝ հաշվի առնելով հետպատերազմական և պանդեմիայով պայմանավորված իրավիճակը:

Արտասահմանյան գործուղումներից՝ այդ թվում ներկայացուցչական բնույթի այցերից, ակնկալվում են քաղաքային տնտեսության տարբեր բնագավառներում հնարավոր ռեսուրսների ներգրավում, փորձի փոխանակում, վերապատրաստում, ծրագրային բանակցություններ, մասնակցություններ նստաշրջաններին, մշակութային և հումանիտար կապերի ընդլայնում, Երևանի հանրաճանաչելիության բարձրացում և այլն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ